

իրավունքը ճանաչելու և նույն մասով սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով:

Դատարանի 2014թ. հուլիսի 29-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2014թ. նոյեմբերի 20-ին վճռաբեկ բողոք են բերել հայցվոր Վարդան Օհանյանը և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանը:

Գերագույն դատարանի 2014թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը բերվել է նյութական իրավունքի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը չի ղեկավարվել ԼՂՀ Քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասով և սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 562-րդ և 567-րդ հոդվածների դրույթները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

1. Վեճի առարկա պահեստի կիսման կապակցությամբ 2001թ. փետրվարի 6-ին Պատասխանողի հետ առուվաճառքի գործարքը կնքելուց և նրան գումարը փոխանցելուց հետո բազմաթիվ անգամ ցանկացել են գործարքին նոտարական վավերացում տալ, սակայն Պատասխանողը տարբեր պատճառներով հրաժարվել է նոտարական գրասենյակ ներկայանալուց:
2. Վեճի առարկա պահեստի առուվաճառքի գործարքը ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Հաղորդի տարածքային ստորաբաժանումում գրանցման նպատակով 2007թ. ընթացքում Պատասխանողի հետ որոշակի գործողություններ կատարելուց հետո վերջինս տարբեր պատրվակներով ձգձգել է այդ գործընթացն ավարտին հասցնելը, իսկ 2013 թվականին՝ վերջնականապես հրաժարվել դրանից:
3. Հայցվորների կողմից վեճի առարկա պահեստի կեսը 2001թ. փետրվարի 6-ին 425.000 ՀՀ դրամով գնելու և շուրջ 13 տարիների ընթացքում որպես սեփական գույք օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու հանգամանքների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանն անհիմն եզրակացրել է, որ վիճարկվող գործարքը վավեր ճանաչելու պահանջն օրինաչափ կլիներ, եթե այն կնքված լիներ գրավոր ձևով, իսկ գումարը վճարված լիներ փաստն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները կիրառելու համար:

Բողոքաբերները գտնում են, որ ստորադաս դատարանների որոշումներն իրենց համար առաջացրել են ծանր հետևանքներ՝ զրկելով իրենց օրենքով պատկանող սեփականությունից:

Բողոքի հեղինակները խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014թ. հոկտեմբերի 20-ի որոշումը և <<բողոքը բավարարել>>:

3.Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վերաքննիչ դատարանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Նորայր Գրիգորյանի 2014թ. սեպտեմբերի 5-ի մակագրության թերթիկի համաձայն՝ ԸԻԴ 1062/02/14թ. քաղաքացիական գործով հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանի վերաքննիչ բողոքի քննությունը հանձնարարվել է Վերաքննիչ դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր Լիլյա Ավանեսյան, դատավորներ Հրայր Աբրահամյան, Կարեն Սաղյան /գ.թ. -105/:
2. Վերաքննիչ դատարանը՝ նախագահող դատավոր Լիլյա Ավանեսյան, դատավորներ Հրայր Աբրահամյան, Կարեն Սաղյան կազմով 2014թ. սեպտեմբերի 22-ի որոշմամբ հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և գործի դատաքննությունը նշանակել 2014թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 11-ին /գ.թ. -115/:
3. Հերթական աշխատանքային արձակուրդ մեկնելու կապակցությամբ նախագահող դատավոր Լիլյա Ավանեսյանը 2014թ. հոկտեմբերի 3-ի թվակիր գրությամբ ԸԻԴ 1062/02/14թ. քաղաքացիական գործը և վերաքննիչ վարույթի նյութերը հանձնել է Վերաքննիչ դատարանի նախագահին /գ.թ. -119/:
4. Վերաքննիչ դատարանի նախագահի 2014թ. հոկտեմբերի 6-ի մակագրության թերթիկի համաձայն՝ ստեղծվել է նոր դատական կազմ և գործի վերաքննությունը հանձնվել է նախագահող դատավոր Հրայր Աբրահամյանին, դատավորներ Հովհաննես Գրիգորյանին, Կարեն Սաղյանին /գ.թ. -120/:
5. Վերաքննիչ դատարանը՝ նախագահող դատավոր Հրայր Աբրահամյան, դատավորներ Հովհաննես Գրիգորյան, Կարեն Սաղյան կազմով 2014թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանի վերաքննիչ բողոքը կրկին ընդունել է վարույթ և գործի դատաքննությունը վերստին նշանակել 2014թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 11:30-ին /գ.թ. -121/:
6. Համաձայն 13.10.2014թ. դատական նիստի արձանագրության՝ բողոքարկվող գործի դատաքննությունն սկսվել և ավարտվել է նախագահող դատավոր Հրայր Աբրահամյան, դատավորներ Հովհաննես Գրիգորյան, Կարեն Սաղյան կազմով, սակայն 20.10.2014թ. դատական ակտը հրապարակվել է նախագահող դատավոր Հրայր Աբրահամյան, դատավորներ Նորայր Գրիգորյան, Կարեն Սաղյան կազմով:
7. Գործում առկա չէ ապացույց դատավոր Նորայր Գրիգորյանին դատարանի կազմում ընդգրկելու մասին:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքարկված դատական ակտի վճռաբեկ վերանայման նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է, ուստի սույն վճռաբեկ բողոքի քննության հետ կապված, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե վճռաբեկ բողոքում չնշված, բայց բողոքարկված գործում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքի /հիմքերի/ առկայության դեպքում, Գերագույն դատարանը պարտավոր է արդյո՞ք անդրադառնալ այդ հիմքին՝ դուրս գալով

վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և այդ հիմքով բեկանել դատական ակտը:

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ ԼՂՀ Սահմանադրության /այսուհետ՝ Սահմանադրություն/ մի քանի նորմերի, որոնք գերակա և պարտադիր են Սահմանադրությունից բխող բոլոր իրավական ակտերի համար:

Սահմանադրության 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է:

Օրինականության սկզբունքը, որը համընդհանուր է իրավունքի բոլոր ճյուղերի համար, ամրագրված է Սահմանադրության մի շարք նորմերում, իսկ ընդհանուր տեսքով՝ Սահմանադրության 6-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Օրինականության սկզբունքը դատարանների համար նշանակում է, որ դատարանների բոլոր որոշումները և դատավարական գործողությունները պետք է համապատասխանեն ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերին, այսինքն՝ օրենքին: Այլ կերպ ասած, օրինականության սկզբունքը պահանջ է դատարաններին՝ իրենց գործունեության մեջ անշեղորեն ղեկավարվել նյութական և դատավարական իրավունքի նորմերով, առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերով:

Օրինականության սկզբունքը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում /այսուհետ՝ նաև Օրենսգիրք/ չի առանձնացված, բայց նրա նշանակությունը և ազդեցությունն արտացոլված են Օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում և այն վերադաս դատարանի համար չափանիշ է՝ ստորադաս դատարանի դատական ակտի օրինական և հիմնավորված լինելը ստուգելու համար: Այսպես, Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ դատարանը վեճերը և այլ գործերը լուծում է Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա: Օրենսգրքի 121-րդ հոդվածից նկատելի է, որ դատարանի վճռին ներկայացվող հիմնական պահանջներից մեկն օրինականությունն է: Այստեղից բխում է, որ յուրաքանչյուր անհիմն վճիռ պետք է անօրինական համարել, իսկ անօրինական դատական որոշումը խաթարում է արդարադատության բուն էությունը և սասանում դատական իշխանության հեղինակությունը:

Օրինականության սկզբունքի իրացման երաշխիքներից մեկն էլ դատական սխալի վերացումն է: Օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված վճռաբեկ բողոք բերելու հիմքերից մեկը դատական սխալն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Այդ առումով, օրենսդիրն Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասում նշել է այն անվերապահ կամ պարտադիր հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման: Փաստորեն, Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասը հրամայական բնույթ ունի և անվերապահ է հանդիսանում:

Գերագույն դատարանը շեշտում է, որ արդարադատության իրականացման տեսանկյունից Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի և 252-րդ հոդվածի նորմերն չեն հակասում, այլ՝ փոխլրացնում են միմյանց և ամեն պարագայում ուղղված են ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը վերհանելուն և ուղղելուն:

Այսպիսով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկության կարգով քաղաքացիական գործերով դատական ակտերի վերանայման վարույթը միանշանակ չպետք է կախման մեջ դնել վճռաբեկ բողոքի հիմքերից և հիմնավորումներից, քանի որ բողոքարկված դատական ակտով քաղաքացիական դատավարության իրականացման սկզբունքների և հիմնական կանոնների խախտման փաստերն ինքնըստինքյան կասկածի տակ են դնում նման խախտումներով ընդունված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը:

Նետևաբար, բողոքարկված գործով Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի /<<վճիռը բեկանելու անվերապահ հիմքեր>>/ առկայության դեպքում, Գերագույն դատարանը, խստորեն ղեկավարվելով օրինականության գերակայության սկզբունքով և արդարադատության վերջնական նպատակին հասնելու համար, դատական ակտի վերանայման ընթացքում չպետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքով:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

- 1/ դատարանը գործը քննել է ոչ օրինաչափ կազմով.
- 2/ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.
- 3/ վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.
- 4/ վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.
- 5/ գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Սույն որոշման 3-րդ մասում շարադրված փաստերի համաձայն՝ ԸԻԴ 1062/02/14թ. քաղաքացիական գործով հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ. Օհանյանի վերաքննիչ բողոքի դատաքննությունն իրականացվել և դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվել է նախագահող դատավոր Հրայր Աբրահամյան, դատավորներ Հովհաննես Գրիգորյան, Կարեն Սադյան կազմով, իսկ Վերաքննիչ դատարանի 20.10.2014թ. որոշումը ստորագրվել է նախագահող դատավոր Հրայր Աբրահամյանի, դատավորներ Կարեն Սադյանի և Նորայր Գրիգորյանի կողմից: Գործի փաստերի համադրման արդյունքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը ստորագրել է ոչ այն դատավորը, որն այն կայացրել է: Մասնավորապես՝ դատավոր Նորայր Գրիգորյանը չի կայացրել բողոքարկվող որոշումը, քանի որ ընդգրկված չէր դատարանի կազմում: Նման եզրահանգման համար Գերագույն դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ ապացույց՝ դատավոր Հովհաննես Գրիգորյանին դատարանի կազմից հանելու և դատավոր Նորայր Գրիգորյանին դատարանի կազմում ընդգրկելու

մասին: Տվյալ դեպքում առկա է Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերը՝ դատական ակտը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն և դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ:

Մահմանադրության 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օրենքներն ու այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Եվրոպական դատարանը Պոստխովն ընդդեմ Ռուսաստանի գործով նշել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»՝ արտահայտությունը վերաբերում է ոչ միայն դատարանի օրենքի ուժով ստեղծված լինելու հանգամանքին, այլ նաև դատարանի կազմի օրինական լինելուն /տես՝ Պոստխովն ընդդեմ Ռուսաստանի Եվրոպական դատարանի 04.03.2003 թվականի վճիռը, գանգատ 634886/00, 39 և 41 կետեր/:

Նման պայմաններում Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով մի դատական ակտ, որը ստորագրել է ոչ այն դատավորը, որն այն կայացրել է, և դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի գործել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Տվյալ պարագայում, Վերաքննիչ դատարանը՝ նախագահող դատավոր Հրայր Աբրահամյան, դատավորներ Նորայր Գրիգորյան, Կարեն Սադյան կազմով իրավասու չի եղել արդարադատություն իրականացնելու:

Ինչպես նկատելի է, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից դատաքննության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ են մի շարք պահանջներ, որոնց պետք է բավարարի վեճը քննող դատական մարմինը: Այդ պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա: Մասնավորապես, Գերագույն դատարանը գտնում է, որ նշված պահանջը սերտորեն կապված է դատարանի կազմավորման ընթացակարգի հետ, որը պետք է համապատասխանի օրենքին:

Սույն գործով վերը վերլուծության ենթարկված հանգամանքների համակցությունը Գերագույն դատարանին բերում են այն եզրահանգման, որ բողոքարկվող դատական ակտը կայացվել է Վերաքննիչ դատարանի ոչ օրինական դատական կազմի կողմից, քանի որ դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ և դատական ակտը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն:

Այսպիսով, բողոքարկվող գործում Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Բացի այդ, Գերագույն դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասը, որն ըստ դատական նիստի արձանագրության հրապարակվել է 2014թ. հոկտեմբերի 20-ին, բացակայում է գործի նյութերից: Դատական նիստի նույն արձանագրության մեջ չկան տվյալներ, որոնք կվկայեն, որ բողոքաբերը ԼՂՀ

քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն <<նկատի է ունեցել 300-րդ հոդվածի>> 2-րդ մասը, ինչպես նշված է Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման մեջ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված նյութական իրավունքի նորմերի խախտված լինելու վերաբերյալ հիմնավորումներին, ապա Գերագույն դատարանը Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի խախտված լինելու պայմաններում դրանց չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Վարդան Օհանյանի և հայցվոր Էդիկ Օհանյանի ներկայացուցիչ Գ.Օհանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	_____	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	_____	Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
	_____	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ